

**ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆՊԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՍՅԱՆ

Բազմաթիվ պետությունների ուշադրության կենտրոնում այսօր, ի թիվս այլ խնդիրների, թափոնների աճող ծավալների և դրանց արդյունավետ կառավարման մարտահրավերներն են: Հիմնախնդիրն ընդգրկում է մարդկանց առողջության վրա բացասական ազդեցությունների և շրջակա միջավայրի պահպանության, տնտեսության ոլորտում էական փոփոխությունների, այդ թվում՝ շրջանաձև տնտեսության սկզբունքների որդեգրման և այլ բնագավառներ: Ու թեև ներպետական և միջազգային տարբեր հարթակներում գիտակառնորեն և գործնականում բազմիցս հիմնավորվել է թափոնների (հատկապես վտանգավոր թափոնների) բացասական ազդեցության փաստը, այնուամենայնիվ դրանց ծավալները և կառավարման հիմնախնդիրները դեռևս շարունակում են մնալ խիստ անհանգստացնող: Մինչդեռ թափոնների հիերարխիայի արդյունավետ կիրառման դեպքում երկիրը տնտեսական, բնապահպանական, սոցիալական լուրջ օգուտներ է ստանում՝ տնտեսապես արժեքավոր թափոնների օգտահանման, էներգաարդյունավետության բարձրացման, ներկրվող ռեսուրսներից կախվածության նվազեցման և այլ ձևերով:

***Բանալի բառեր** – շրջանաձև տնտեսություն, կենսաբանական թափոն, կենսաքայքայվող (օրգանական) թափոն, էլեկտրական թափոն, թափոնների հիերարխիա, շրջանաձև տնտեսություն*

Յուրաքանչյուր երկրում թափոնների կառավարման արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով և երկրի առանձնահատկություններով: Օրինակ՝ աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները նպաստավոր կամ, հակառակը, խոչընդոտող գործոն կարող են լինել թափոնների արդյունավետ կառավարման գործընթացում: Այդ առումով պետք է նկատի ունենալ, որ Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, որտեղ առկա են երկրաֆիզիկական վտանգերին առնչվող նշանակալի ռիսկեր: Երկրի տարածքում մեծ է երկրաշարժերի և սողանքների (երկրի տարածքի 1/3-ը սողանքավտանգ գոտում է), սելավների և ջրհեղեղների վտանգը, հանդիպում են փլուզումներ: Այս գործընթացներն ու երևույթներն աղբավայրերի տարածքներում և շրջակայքում կարող են հանգեցնել բացասական լուրջ ազդեցություն-

ների: Բացի այդ՝ լեռնային ռելիեֆը և հատկապես ձմռան ամիսներին տրանսպորտային անհասանելիությունը բացասաբար են անդրադառնում աղբահանության աշխատանքների վրա:

Պակաս կարևոր չէ նաև ուրբանիզացման մակարդակը, որը Հայաստանում բարձր է՝ 64%: դա նշանակում է, որ կան սակավաբնակ և հեռավոր բազմաթիվ համայնքներ, որտեղ թափոնների կառավարումը ծախսատար է, ուստի փաստացի չի իրականացվում:

Կարևոր առանձնահատկություններ են նաև հասարակության մշակութային վարքագիծը, սովորությունները, ինչպիսիք են, օրինակ՝ միջոցառումներից հետո հատկապես պլաստիկ թափոնների մեծածավալ գոյացումը չսահմանված վայրերում կամ գյուղական բնակավայրերում տերևների այրման սովորությունը, որը մեծ վնաս է հասցնում հողի բերրի շերտին, և այլն:

Վերոհիշյալ խնդիրների լուծմանը զուգահեռ՝ ոլորտի հաջողության կարևոր գրավականներից են պետական կամքի դրսևորումը, ֆինանսական լուրջ միջոցների ներգրավման հնարավորությունները, ներպետական և միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ ու արդյունավետ համագործակցությունը և այլն:

Հայաստանում այսօր թափոնների կառավարման բնագավառում զգալի բարեփոխումների անհրաժեշտություն կա: Դրանք ընդգրկում են թե՛ օրենսդրական բացերի, թե՛ ենթակառուցվածքների, թե՛ ֆինանսական, ինչպես նաև անհատի ու հասարակության վարքագծի ոլորտները:

Թափոնների կառավարման ոլորտի օրենսդրական բարեփոխումները ՀՀ-ում սկսվել են անկախության առաջին տարիներից. այդ հարցը միշտ ուշադրության կենտրոնում է եղել, ընդունվել են ոլորտի հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական տասնյակ ակտեր, վավերացվել են միջազգային համաձայնագրեր, սակայն, այնուամենայնիվ, դեռևս կան օրենսդրական բազմաթիվ բացեր ու թերություններ, որոնք լուրջ խոչընդոտ են բնագավառի կայուն կառավարման առումով:

Մասնավորապես, ՀՀ-ում դեռևս 2004 թ.-ին ընդունվել և 2005 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել «Թափոնների մասին»¹ օրենքը, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերություններ, ինչպես նաև տրվում են մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքում սահմանված են մի շարք հասկացություններ, ամրագրված են թափոնների գործածության ոլորտում ՀՀ կառավարության, շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի, առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմնի, տարածքա-

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2004.12.28/72(371), Ընդունվել է 24.11.2004, ուժի մեջ է մտել 07.01.2005:

յին կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, թափոնների գործածության ոլորտում նորմավորման, հաշվառման, անձնագրավորման, վիճակագրական հաշվետվությունների և ստանդարտացման իրավակարգավորումները, թափոնների գործածության ոլորտում ներգրավված սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, թափոնների օգտահանման և դրանց գոյացման ծավալների նվազեցման միջոցառումների տնտեսական խթանման ապահովման, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտի վերահսկողության ու իրավախախտումների համար պատասխանատվության իրավակարգավորումները: Պետք է նշել, որ տվյալ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով հետագայում ընդունվել են շուրջ չորս տասնյակ ենթաօրենսդրական ակտեր: Անհրաժեշտ է նշել, որ առավելություններով հանդերձ՝ օրենքում առկա են նաև որոշ բացեր ու թերություններ, որոնք, հաշվի առնելով ոլորտի օրենսդրության մեջ օրենքի կենտրոնական դերն ու նշանակությունը, անհրաժեշտ է լրացնել: Մասնավորապես, թեև օրենքը նախատեսում և խթանում է թափոնների հիերարխիայի որոշ բաղադրիչներ, սակայն սկսած հասկացությունների մակարդակում դրա սահմանումից մինչև այդ գաղափարի ու դրա նպատակի հստակ ու լիարժեք իրականացումը բացակայում են օրենքում: Գաղափարախոսությունն այն միտքը, այն իմաստն է, որը դրվում է օրենքի հիմքում, իսկ համապատասխան իրավակարգավորումներն էլ ուղղվում են այդ միտքը կյանքի կոչելուն, մինչդեռ մեր օրենսդրության մեջ թափոնների հիերարխիայի գաղափարը հեռու է լիարժեք ներկայացված լինելուց: Հիերարխիայի ինստիտուտը Եվրոպական միությունում հիմնադրվել է դեռևս 1975 թ. ընդունված՝ «Թափոնների կառավարման շրջանակային դիրեկտիվով»²: Այն ուղենիշ է դարձել բազմաթիվ երկրների համար՝ մշակելու կամ բարելավելու իրենց ազգային քաղաքականությունները: Թափոնների հիերարխիան սահմանում է թափոնների նվազեցման և կառավարման քայլերի առաջնահերթությունը, որի ամենանախընտրելի քայլը թափոնների գոյացումը կանխելն է, քանակը կրճատելը, ապա վերաօգտագործելը նորոգման աշխատանքների միջոցով: Հաջորդ քայլը վերամշակումն է, ապա՝ օգտահանումը (էներգիայի կամ սնուցման օգտահանումը), իսկ վերջինը՝ նվազ ցանկալի տարբերակը, թափոնները հեռացնելն է (աղբակիզումը կամ դրանց վերջնական տեղադրումը պատշաճորեն կառուցված աղբավայրերում):

Այս գաղափարախոսությունն ամբողջությամբ համահունչ է շրջանաձև տնտեսության սկզբունքներին, քանի որ միտված է նվազեցնելու արտադրության մեջ նյութերի գործածումը և թափոնների քանակը, երկարացնելու արտադրանքի դիմացկունությունը, վերանայելու պիտանիության ավարտ ունեցող ապրանքների նյութական օգտահանման

² Տե՛ս <https://www.eea.europa.eu/policy-documents/council-directive-75-442-eeec>

մակարդակը մեծացնելու նպատակով արտադրանքի և ծառայության դիզայնը: Այն համահունչ է նաև «ադոտոտողը վճարում է» և «արտադրողի պատասխանատվության ընդլայնում» բնապահպանական սկզբունքների: Վերջիններիս թերի իրականացումը բացասական լուրջ հետևանքներ է առաջացնում նաև քաղաքացիների ու կազմակերպությունների վարքագծի, ծախսերի ոչ լիարժեք վերականգնման առումներով:

Վերադառնալով «թափոնների հիերարխիա» հասկացության բացակայությանը օրենքում՝ շատ կարևոր ենք համարում ընդգծել, որ թափոնների հիերարխիայի ներդրմանն առնչվող պարտավորություն նախատեսված է նաև 2019 թ. հունիսի 1-ին ՀՀ վարչապետի կողմից ընդունած՝ Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին № 666-Լ որոշման «Թափոնների կառավարում» բաժնում: Ըստ այդ փաստաթղթի՝ 2022 թ.-ի առաջին կիսամյակում արդեն պետք է կազմված լինեին թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգությանը համապատասխան թափոնների կառավարման պլանների և թափոնների առաջացման կանխարգելման ծրագրերը, որոնք ներառում են՝

- թափոնների առաջացման նվազեցումը,
- թափոնների տեսակավորված հավաքը,
- թափոնների վերամշակումը:

Ելնելով ոլորտի ներկա ինստիտուցիոնալ, ենթակառուցվածքային, օրենսդրական թերի իրավիճակից, վերոհիշյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ահռելի աշխատանքի ծավալից ու այն հանգամանքից, որ տրամադրված ժամկետի մեծ մասն արդեն անցալու է, գտնում ենք, որ պետք է գործադրել լուրջ ջանքեր այս նպատակին հասնելու համար:

Թափոնների կառավարման իրավական դաշտում հասկացություններին վերաբերող հարցերը բազմաթիվ են: Նախ և առաջ՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոններ են արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդները, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները: Սա թափոնի համար բավականին նեղ սահմանում է, քանի որ ընդգրկում է միայն սպառողական հատկությունները կորցրած իրերն ու առարկաները և մնացորդները, մինչդեռ ներկայումս, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում մարդիկ անձամբ են որոշում՝ ազատվել կամ հեռացնել միայն սկզբնական սպառողական հատկությունները կորցրած իրերը, թե՛ նաև այնպիսիք, որոնք դեռևս չեն

կորցրել այդ հատկությունները: Օրինակ՝ որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2008 թ. նոյեմբերի 19-ին ընդունած 2008/98/ԵՀ «Թափոնների մասին հրահանգի»³ համաձայն՝ թափոն է համարվում ցանկացած նյութ կամ առարկա, որը այն տնօրինողը հեռացրել է, մտադիր է հեռացնել կամ անհրաժեշտ է, որ հեռացնի: Համեմատությունը ցույց է տալիս, թե որքան լայն ու ընդգրկուն է «թափոն» հասկացությունը մեկնաբանվում ԵՄ օրենսդրությամբ: Այսպես թե այնպես, Հայաստանում էլ աղբավայրերում հայտնվում են հազարավոր իրեր, որոնք փաստացի արդեն հեռացվել են, բայց չեն սպառել իրենց սկզբնական սպառողական հատկությունները: ՀՀ օրենսդրության մեջ «թափոն» հասկացության նեղ մեկնաբանության պատճառով դրանք թափոն համարվել չեն կարող, թեև փաստացի «հանգրվանել» են աղբամանում, և դրանց նկատմամբ վերաբերմունքը տարբեր չէ սկզբնական սպառողական հատկությունները կորցրածներից: Ուստի ճիշտ կլինի ՀՀ օրենսդրությամբ ևս «թափոն» հասկացությունն ընդլայնել ներառելով այն բոլոր իրերն ու առարկաները, որոնք տնօրինողը պարզապես հեռացրել է, մտադիր է հեռացնել, կամ դա անհրաժեշտություն է:

Էկոլոգիական իրավունքի գիտության մեջ հասկացությունների հարցը խորհրդային գիտնականները բարձրացրել են դեռևս 1970-ականներին: Պրոֆ. Վ. Պետրովի կարծիքով՝ գիտականորեն հիմնավորված էկոլոգիական տերմինաբանության մշակումը էկոհրավական հետազոտությունների կարևորագույն խնդիրներից է⁴: Այս հարցում պրոֆ. Օ. Մ. Կոլբասովն այն դիրքորոշումն է հայտնում, որ տերմինաբանությունը պետք է լինի հստակ ու լիարժեք, քանի որ տերմինաբանական տարաձայնությունների հետևում թաքնված են տեսական տարաձայնություններ⁵: Համամիտ լինելով վերոհիշյալ կարծիքներին՝ լուրջ քննադատության ենթակա ենք համարում «Թափոնների մասին» օրենքում թափոնների՝ որոշ առանձին հոսքերի հասկացությունների բացակայությունը, այդ թվում՝ «էլեկտրոնային թափոն», «ավտոմոբիլային թափոն», «կենսաբանական թափոն», «էլեկտրական թափոն» հասկացությունները: Բնականաբար, թվարկված բոլոր տեսակների թափոններն էլ մարդկային կենսագործունեության ընթացքում առաջացել և շարունակում են առաջանալ նաև ՀՀ-ում: Մասնավորապես, խոհանոցային, կենցաղային բազմաթիվ սարքավորումներ, հեռուստացույցներ, բջջային հեռախոսներ, համակարգիչներ և այլ ապրանքներ, որոնք էլեկտրական հոսանք օգտագործող մարտկոցով կամ վարդակով միացվող սարքավորումներ են, հազարավոր լամպեր, լյումինեսցենտ լույ-

³ Տե՛ս <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32008L0098>

⁴ Տե՛ս **Петров В. В.** Проблемы эколога-правовой терминологии // Правовые проблемы экологии. Сборник обзоров, М., 1980, էջ 101-133:

⁵ Տե՛ս **Колбасов О. С.** Терминологические блуждания в экологии // Государство и право, 1999, № 10, էջ 27-37:

սեր, դառնում են օգտագործման համար ոչ պիտանի ու վերածվում են թափոնի: Փոքր եզրաչափերի այս թափոնները սովորաբար հայտնվում են թափոնային այլ հոսքերում՝ կենցաղային թափոններում, իսկ խոշոր եզրաչափերի էլեկտրոնային թափոնները տեղադրվում են աղբարկղների կողքին կամ դրանց համար չսահմանված այլ վայրերում (օրինակ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում բոլորիս համար տեսանելի են թափոնի վերածված՝ լվացքի մեքենաների հանգրվանատեղեր): Այս առումով առավել խոցելի, բայց իրավական կարգավորման ենթարկված չէ փոքր մարտկոցների հիմնախնդիրը: Նշենք, որ Եվրոպական միությունում նման թափոնների կառավարման ոլորտում գործում է համապատասխան օրենսդրություն, մինչդեռ ՀՀ-ում դրանք ևս հիմնականում խառնվում են կենցաղային աղբի հետ, և ինչպես մյուս երկրներում, որտեղ չկա էլեկտրական թափոնների վերաբերյալ ազգային օրենսդրություն, դրանք գրանցվում են որպես այլ տեսակի թափոններ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ նման դեպքերում այս տիպի թափոնների վտանգավոր բաղադրիչները պատշաճ կերպով չեն հեռացվում՝ անդառնալի բացասական հետևանքներ թողնելով շրջակա միջավայրի վրա, այնինչ դրանք կարող են վերամշակվել՝ առանց համապատասխան աշխատակիցներին դրանցում առկա վնասակար նյութերից արդյունավետ պաշտպանելու: Ու թեև աշխարհում առանձին հավաքվում և կառավարվում են էլեկտրական թափոնների միայն 20%-ը⁶, բայց, մեր խորին համոզմամբ, լիովին հնարավոր է պատշաճ օրենսդրություն մշակելու և ընդունելու դեպքում, համապատասխան ֆինանսական հոսքերի ներգրավմամբ, բնակչության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու միջոցով փոքր տարածք զբաղեցնող և ոչ մեծ բնակչություն ունեցող Հայաստանում հասնել լիարժեք կարգավորման: Մինչդեռ այդ հասկացությունների բացակայությունն արդեն իսկ լուրջ խոչընդոտ է դրանց գործածության իրավական հիմքերը սահմանելու և խորքային իրավակարգավորումներ նախատեսելու առումով:

Համաձայն ենք, որ ՀՀ օրենսդրությունը պարունակում է կարգավորումներ արտադրության և սպառման թափոնների, շինարարական և քանդման թափոնների, բժշկական թափոնների և վտանգավոր քիմիական նյութերի, թափոնային յուղերի, քսանյութերի վերաբերյալ, բայց իրավական և պրակտիկ առումներով շատ կարևոր է, որ թափոնների գոնե բոլոր խոշոր հոսքերի հասկացություններն առկա լինեն ոլորտի կենտրոնական նորմատիվ ակտում՝ «Թափոնների մասին» օրենքում: Քննարկվող թեմայի հետ իրավական տեսանկյունից ուղղակի առնչություն ունի նաև այն «տարօրինակությունը», որ «կենսաբանական թափոն» հասկացությունը ներկայացված է Վարչական իրավա-

⁶ Տե՛ս http://collections.unu.edu/eserv/UNU:6341/Global-E-waste_Monitor_2017_electronic_single_pages_.pdf

խախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: Մտացվում է, որ թեև նման թափոններ առաջանում են մարդկային նորմալ կենսագործունեության ընթացքում, թեև շատ կարևոր է դրանց արդյունավետ գործածության ոլորտը, այդ թվում՝ օգտահանումը, վերամշակումը, հեռացումը և այլն, բայց հասարակությունը դրանց մասին պատկերացում կարող է կազմել միայն վարչական իրավախախտումների օրենսդրության շրջանակներում: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կենսաբանական թափոնին տրված մեկնաբանությունը, այն է՝ կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ, առավել բնորոշ է օրգանական թափոնի և ոչ թե կենսաբանական թափոնին, բայց այստեղ էլ պետք է նկատի ունենալ, որ օրգանական թափոնները չեն սահմանափակվում միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նախատեսված՝ կենսաբանական թափոնների սահմաններով: Օրգանական թափոնները, բացի վերոգրյալից, ներառում են նաև գյուղատնտեսական գործունեության մշակաբույսերի թափոնները: Ելնելով վերոգրյալից՝ կարևոր ենք համարում նախատեսել օրենսդրության մեջ «օրգանական թափոն» կամ «կենսաքայքայվող թափոն» հասկացության և դրանց գործածության լիարժեք իրավակարգավորումները, ինչի շնորհիվ կդադարի գործել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված թերի սահմանումը:

Այս առումով կարևոր ենք համարում ընդգծել, որ մի շարք երկրներում օրգանական թափոնների կառավարման լավագույն լուծումներից են կենսագազ արտադրող կայանները: Դրանց գործունեությունը համարվում է բնապահպանական և ֆինանսական օգուտներ բերող, որտեղ կարևորվում են քիմիական պարարտանյութերը օրգանական պարարտանյութերով փոխարինելու, էլեկտրաէներգիայի ու ջեռուցման կայուն հասանելիության և հատկապես կլիմայի փոփոխության հետևանքով ջերմոցային գազերի արտանետումների կրճատման գործընթացները: Հայաստանում, օրինակ, բնական գազը կենցաղում օգտագործվում է գրեթե համատարած (տնային տնտեսությունների 90 տոկոսից ավելին), սակայն, համաձայն կանխատեսումների, բնական գազի համաշխարհային պաշարները ներկա սպառման տեմպերի պահպանման պարագայում սպառվելու են մոտակա 45-55 տարիներին⁷: Ահա ևս մեկ պատճառ թափոնների օգտահանման միջոցով կենսագազի կայաններ գործարկելու համար: Ընդգծենք, որ Հայաստանում այս բնագավառում վիճակն անմխիթար է: Օրինակ՝ 2008-2014 թթ. Ընթացքում «Լուսակերտ բիոգազ փլանթը» գործարկել է թռչնաբուծական թափոն-

⁷ Տե՛ս ՀՀ կառավարության 2021 թ.-ի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշման հավելված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.):

ների կառավարմամբ կենսագազի կայան, որն իր նախադեպը չի ունեցել ոչ միայն Հայաստանում, այլև Կովկասում: Ցավոք, 2014 թ.-ից այն դադարեցրել է իր գործունեությունը:

2011 թ.-ից ՀՀ-ում աշխատում է նաև «ԱՌՎԱԿՕ» հայ-նորվեգական ՓԲԸ-ն, որն զբաղվում է օրգանական թափոնների վերամշակմամբ՝ ստանալով օրգանական կենսածին տարատեսակ պարարտանյութեր և հողի բարելավիչներ: Այս և այլ որոշ ընկերությունների գործունեությունը փաստում է, որ Հայաստանում ևս հնարավոր է հավաքել օրգանական թափոններ, վերամշակել, օգտահանել դրանք, սակայն նշենք, որ այդ ամենն առավել լիարժեք ու ավելի մեծ ծավալներով իրագործելի կլինի իրավական դաշտի բարելավման և ենթակառուցվածքների հարմարեցման դեպքում, մինչդեռ ոլորտում հասկացությունների հստակեցման լուրջ խնդիր կա:

Ի դեպ, քննարկվող ոլորտի օրենսդրությունը, ընդգրկուն հասկացություններից զատ, չի նախատեսում նաև ոլորտի համար կարևոր այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «բարձրորակ վերամշակում», «ցածրորակ վերամշակում», «աղբի տարանջատում» և այլ եզրույթներ: Ստացվում է, որ թափոնների առանձին տեսակների հասկացությունները կա՛մ առհասարակ բացակայում են, կա՛մ թերի են, կա՛մ իրենց տեղում չեն, ինչը լուրջ խոչընդոտ է դրանց արդյունավետ կառավարումն իրականացնելու ճանապարհին:

Թափոնների կառավարման բնագավառում հասկացությունները լիարժեք սահմանելուն զուգահեռ առաջնային քայլերից է դրանց շեղումն աղբավայրերից, այսինքն՝ առաջացման վայրերում դրանց տարանջատումը: Թափոնների տեսակավորումը նյութերի օգտահանման ամենաարդյունավետ նախապայմաններից է: Թափոնների տեսակավորված հավաքումը բոլոր առումներով հեշտացնում է թափոնների սկզբնական մշակման, ինչպես նաև վտանգավոր թափոնների տարանջատման և վնասագերծման գործընթացները: Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում փաստորեն համընդհանուր մոտեցում է աղբավայրերում հսկայական ծավալներով վտանգավոր թափոնները կենցաղային թափոններին միախառնած տեղադրելը: Դրա պատճառը ոչ միայն ենթակառուցվածքների պակասությունն է, այլև այն փաստը, որ ՀՀ-ում թափոնների տեսակավորումը՝ որպես նյութերի ամենաարդյունավետ օգտահանման նախապայման, պատշաճ չի խրախուսվում:

Այս բնագավառի արտոնությունների առումով ուշագրավ է «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը. «Թափոնների օգտահանմանն ու դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների խթանման նպատակով թափոնների գոյացման նվազեցմանն ուղղված տեխնոլոգիաներ ներդնող կազմակերպությունները, որոնք թափոններ են օգտահանում արտադրանքի արտադրման (աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման) ընթացքում, իրակա-

նացնում են դրանց հավաքումը, պահեստավորումը, արտադրամասերի շինարարությունը, ինչպես նաև կազմակերպում են թափոնների օգտահանման համար սարքավորումների արտադրություն, փայտօրակյան մասնակցություն են ունենում թափոնների օգտահանմանը և դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորմանը, կարող են ստանալ արտոնություն օրենքով սահմանված դեպքում»: Առաջին հայացքից արդեն իսկ պարզ է, որ այս հոդվածն ունի բովանդակության պարզեցման կարիք, մասնավորապես՝ պարզ չէ, թե հոդվածում թվարկված գործունեություններից որևէ մեկի իրականացումը բավարար է արդյոք արտոնություն ստանալու համար, թե՞ անհրաժեշտ են մատնանշված բոլոր գործունեությունները: Բացի բովանդակային անորոշությունից, հոդվածն ունի նաև կիրառման բարդություն, քանի որ այս օրենքի ընդունումից հետո որևէ նորմատիվ իրավական ակտով չի նախատեսվել նշված արտոնությունների համար դիմելու և դրանք ստանալու ընթացակարգ: Բացի այդ, 23-րդ հոդվածը չի մասնավորեցնում նշված արտոնությունների տեսակները՝ հարկային արտոնություն, ներմուծման արտոնություն, գույք կանաչ սակագի՞ն և այլն: Վստահ ենք, որ նման անորոշությունները հարթելուց հետո միայն հնարավոր կլինի կյանքի կոչել այս հոդվածը: Վերոհիշյալը հիմնավորելու համար բավական է նշել, որ թեև «Թափոնների մասին» ՀՀ օրենքը գործում է դեռևս 2005 թ.-ից, սակայն մինչ օրս՝ օրենքի ընդունումից 17 տարի անց, որևէ սուբյեկտ այս հոդվածի հիման վրա չի ստացել արտոնություն:

Ինչ վերաբերում է տեսակավորման հարցի կարևորությանը, ապա այն հատկապես ընդգծվում է որոշ՝ առանձնակի վտանգավոր իրերի ու առարկաների դեպքում, ինչպես օրինակ՝ սնդիկային ջերմաչափը, սնդիկ պարունակող լամպերը և այլն: Թեև հազարավոր ջերմաչափեր ու լամպեր կոտրվում են կամ դառնում օգտագործման համար ոչ պիտանի, սակայն ՀՀ բնակիչներն այս առարկաների վտանգավորության աստիճանի մասին լավագույնս տեղեկացված լինելու դեպքում էլ չունեն օբյեկտիվ հնարավորություն դրանք հեռացնելու պատշաճ վայրում: Չնայած այդպիսի թափոնների վնասակարությանը և դրանց բացասական ազդեցություններին՝ իրավական համապատասխան գործընթացներ կամ ենթակառուցվածքի նախագծում կամ շինարարություն դեռևս չեն իրականացվում:

Քննարկվող հարցի առնչությամբ ցանկանում ենք նաև մատնանշել, որ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնում շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններից է նաև թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կառավարման համակարգի կատարելագործումը: Բացի այդ՝ ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել թափոնների կա-

ռավարման ոլորտում կարևորագույն տեղ զբաղեցնող՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը⁸, որը, իրավակարգավորումներից բացի, նախատեսում է նաև ոլորտի մի շարք հասկացություններ:

Այսպիսով, սույն հոդվածում քննարկված և բազմաթիվ այլ «հասկացությունների» պակասը, դրանց թերի լինելը լուրջ խոչընդոտ են իրավական դաշտում համապատասխան խորքային ու լիարժեք իրավակարգավորումներ նախատեսելու և դրա հիման վրա պրակտիկա ձևավորելու առումով: Մինչդեռ տնտեսապես զարգացած որոշ երկրներ չեն վախեցել իրենց առջև նպատակ դնել հասնելու «գրո թափոն»-ի: Այն, բնականաբար, պահանջում է լայնածավալ ու պետական համապատասխան մարմինների ու հասարակության բոլոր խմբերի ջանադիր աշխատանք, բայց միևնույն ժամանակ ենթադրում է թափոնների իսպառ վերացում: Հայաստանում թափոնների կառավարման ոլորտը դեռևս հեռու է այդպիսին դառնալուց, բայց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թափոնների արդյունավետ կառավարումը հսկայական նշանակություն ունի հանրային առողջության, երկրի բնապահպանական, տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտներում, հաշվի առնելով դրա բացասական հետևանքների երկարատև ու երբեմն լայնածավալ բնույթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ համաշխարհային զարգացումն ու իրողությունը թելադրում են համապատասխան պահանջներ այս ոլորտում, գտնում ենք, որ ծայրահեղ անհրաժեշտություն է ՀՀ-ում ևս կատարելագործել օրենսդրությունը՝ թերություններն ու բացերը վերացնելով, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն այս ոլորտում ճիշտ սահմանելու ու իրականացնելու ճանապարհով բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը և հասնել տեսանելի արդյունքների ու ապահովել շարունակականություն:

ОЛИМПИА ГЕГАМЯН – *Некоторые правовые вопросы, связанные с понятиями в сфере отходов в Республике Армения.* – Подчеркивая роль и значение воздействия отходов на современном этапе научно-технического развития и жизни человека, в данной статье представлен анализ современной ситуации в области понятий и видов отходов в Республике Армения. В статье указывается, что основная сложность сферы также заключается в том, что бенефициаром считается все население РА и в сфере управления задействовано большое количество субъектов.

В статье рассматриваются пробелы и недостатки отрасли и их последствия. Эффективное обращение с отходами имеет большое значение в здравоохранительной, экологической, экономической, социальной и культурной сферах страны, учитывая долгосрочный, а иногда и масштабный характер его негативных последствий.

⁸ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/3643/about>

Учитывая роль и значение национального законодательства в сфере, его влияние на практику, предложены соответствующие решения.

Ключевые слова: *циклическая экономика, биологические отходы, биоразлагаемые отходы, электронные отходы, иерархия отходов*

OLYMPIA GEGHAMYAN – *Some Legal Issues Related to the Concepts of Waste in the Republic of Armenia.* – Emphasizing the role and significance of the impact of waste at the current stage of scientific and technical development and human life, this article presents the analysis of the current situation in the field of concepts of waste management in the Republic of Armenia and their types. The article points out that the main complexity of the sector also lies in the fact that the entire population of the RA is considered the beneficiary and a large number of actors are involved in the management sector.

The article discusses the gaps and shortcomings of the sector and their consequences. Effective waste management is of great importance in the public health, environmental, economic, social and cultural spheres of the country, taking into account the long-term and sometimes large-scale nature of its negative consequences.

Taking into consideration the role and significance of the national legislation in the field, its impact on practice, appropriate solutions have been proposed.

Key words: *circular economy, biological waste, biodegradable waste, electronic waste, waste hierarchy*